ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

Հ. ԴՐՈՆԵՒՈՍ Վ. ԳԱՂԱՏՈՍԵԱՆԻ ՃԱՌԻԸ

(Արտասանված Ներսիսեան դպրոցում հոկտ. 13-ին)

Սրբազան Տէր, բարձր դերապանց և պատուական ունկնդիրք.

Թուսաց կայսրութեան միջի բոլոր հայ կաթոլիկաց կողմանէ, որ փոքրիկ մասնիկ մըն է հայ ազգի ամբողջութեան հանդէպ, կուգամ որատհէս թարմ զգացմամբ բոլոր ներկայ պատկերը դնելու՝ հայ ազգին համար այնքան երախտաւոր եղող պաշտելի տերը հարցն մերոց Սանահայ և Մեսրոպեայ հոգեւոր գլուխը վրայ։

Մեծ է աւուրս կրկին յօբելեանեանց խորհրդաւոր հրաշաշունչն տօնակատարութեան նշանակութիւն և ազդեցութիւն մեր հայոց և օտարաց խիստ վրայ։ Այսօր լեզու հասկնալու կարիք չկայ. ուրախութեամբ և հեցմամբ համակուած սրտերն ինքնին կը խօսին և յիրեար կը զեղանին։

Օրգան շնորհակալութեան արժանի են մեր այն բազմարդիւն հայրապետներ՝ անկիր և անբարբառ ազգս մեր զրպէտ և խօսուն ընծայելովն, նոյնքան խորին շնորհակալութեան արժանի է ներկայ Հայրապետն և Ազգապետն հայոց, անոնց երջանկի յիշատակն և բազմաբեռն արդիւնքն, և ազգիս անմահանշ կարգացման հաեւելի պատկերին՝ այսօրուան հանդիսին՝ այնքան կենդանի գոյներով արտացոլանալուն պատճառը լինելուն համար։

Սրբազան Տէր, բարեհաճեցէք թարգման լինիլ այս անկեղծ զգացմանց և գնահատութեան։

Աւուրս մեծ յօբելեանի առթիւ հայ ազգի գլխուն արժան և իրաւ ծածանող փառաւոր փունջ-պսակի վրայ բաղխելուս, բազմակրօն և բազմացեղ խնդակցողներէ ընձեռուած բարեբարոյ ծաղկանց մէջ՝ կուգամ խառնել և ես նաեւ երեք համեստ ծաղիկներ, որք են ձեռնտրուն այն խոսքն և եռանդուն մաղթանքս, որք յանձնուած են ինձ արտայայտելու հոս, այս տաճարին մէջ, Թուսիոյ բովանդակ հայ կաթոլիկութեան և անոնց հոգեւոր պետի՝ ազաբելական կառավարիչ Սարգիս վարդապետի կողմանէ։

ա) Փառք և պաշտամունք հայոց երանաւոր հնոց նախնեացն, հայոց փառաւոր և շատերու նախանձելի՝ անցեալը կազմողաց։

բ) Հիացմունք, քաջալերանք և զորակիցն բազմահաճած, չարատանջ և զրոհեալ հայ ազգին՝ տեղագրեանն, տոկունութեան և ինքնապահպանութեան հանդէպ։

գ) Մեծ հաւատք, մեծ յոյս և մեծ սէր՝ դէպի ապագայ բարեկարգութիւն հանուր հայութեան։ Մեծ զարի դէպ յառաջդէմ զարգացումն և կատարելութիւն հայ ազգի ամբողջութեամբ, անոր իւրաքանչիւր գաղութի տեղականաղէս, և անոր իւրաքանչիւր զաւակի առանձնապէս։ Թող Հայաստանն ևս օր առաջ տեսնայ «Ֆր ցանկալի խաղաղ օրը» և փառք տայ տուողին։

Հայաստանը, այն հմայիչ կուսանեանորն ազգաց և լեզուաց, որ պահպան մըն է հազարաւոր սրբոց նուիրական ոսկերաց, որ ոռոգուած ու ցողուած է բիւրաւոր մարտիրոսաց, յայտնի և անյայտ նահատակաց, թանկագին արեամբ, թող բերկրի, պտղի, ծլի և ծաղկի ի շունչ մեսաղուա քաղաքական հասունութեան դարմանը, թող բուսնէ, աճեցնէ, ուրճացնէ բազմազոյն, քաղցրաբոյր զանազան ծաղկանց բազմութիւն, կրօնական, բարոյական և իմացական, ճշմարիտ, կշռուն և լուրջ առաքինութեանց։ Ցայսմամ յերկնուստ ի վերուստ զուարճանալն պիտի գիտեն և հոտոտեն այդ մեծ և միաձոյլ փունջը սուրբ հարքն մեր Գրիգորը, Սահակ և Մեսրոպ և պիտի վայելեն թէ ասոքա են զաւակք ընտրեալք հօրդ և ուրախութեամբ ուրախ պիտի լինին ի մեզ։

Ահաւասիկ այս է՝ զիս հոս առաջորդեց և իմ սա խորին և անկեղծ զգացմանցս լուրթիւնը։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՒԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Մեզ հաղորդուած է, որ հայազգային յօբելեանական տօներին Վանքի բակում ներկայ էր Թիֆլիսի II առնարական դպրոցի տնօրէն պ. Նիկ. Դիմ. Նիկոլաձէն, իր օգնականի և միւս ուսուցիչների հետ։ Այնտեղ էին դպրոցի բոլոր 300-ի չափ հայ աշակերտները իրանց վերակացուների հետ։

Ժողովրդական համալսարանի ընկերութեան վարչութեան նախաձեռնութեամբ կիրակի, հոկտ. 20-ին, առ. ժ. 10½-ին Ն. Աղբեանը Ժողովրդական Տանը կը դասախօսէ «Հայ տառերի գիւտը և առաջին տպագրութիւնը» թեմայով։

ՅՕԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

I

Գօրի, 16 հոկտեմբերի

Ուրբաթ, հոկտ. 11-ին, տեղիս պետական տպագրց գիմնազիայում, դասերը վերջանալուց յետոյ, հայոց լեզուի ուսուցիչ Գր. Թիթաբանցը, ներկայութեամբ գիմնազիայի դիրեկտորի և միւս հայ ուսուցիչների, հաւաքելով բոլոր հայ աշակերտներին, բացատրեց հայկական տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ տօնի նշանակութիւնը։ Նոյնը արվել է տեղիս հայոց ծխ. դպրոցում։

Շաբաթ, հոկտ. 12-ին, տեղիս մայր եկեղեցում, համաձայն թեմ. առաջնորդի նախապէս տեսնուած ծրագրի, պատարագին ներկայ էին հայոց դպրոցի աշակերտուհիները իրանց մանկավարժական կազմով, պետական գիմնազիաների հայ աշակերտուհիները և խուռն երկուռն բազմութիւն։ Պատարագը վերջանալուց յետոյ տեղիս զորձակալ քահանան յայտնեց հասարակութեանը, որ հոգեհանգիստ և կաթոլիկոսական մաղթանքը կը կատարվեն հետեւեալ օրը, կիրակի։

Եւ իրաւ, կիրակի, հոկտ. 13-ին, կատարվեց հանդիսաւոր պատարագ, որի ժամանակ երգում էր հայոց դպրոցի երգեցիկ խումբը։ Պատարագից յետոյ հ. զործակալ